զարոցի աշակերտներս ցանկացանք մի փոքր ինչ բանով կարեկից լինել միջնակարգերի դասերի վիճակին, ուստի և կազմելով մեր մէջ մանուկներ կերպիս մի հանգանակութիւն, ժողովեցինք 58 բուբլի 95 կ., որից զատ հանելով 95 կ. փոստատախս, մնացած լիսուն և ութն բուբլի գուսարը ուղարկելով տոպա հետ նուիրատուաց անուանական ցուցակով ի միասին, խնամարկաբար թեղրում եմ, մեծապատիւ խմբագիր, մի անկիւն ներել սորան ձեր պատուական թերթի էջերի մէջտեղ, իսկ գրանմ հասուցանել, ուր հարկն է։ Ահա նուիրատուաց ցուցակը։ Բարաղամանց կարապետ 3 բ., Բարաղամանց Աւետիք 1 բ. 50 կ., Բէշկինանց կարապետ 3 բ., Գէորգեանց Յովհաննէս 3 բ., կոստանեանց Արամ 2 բ., կոստանեանց կոստանդին 2 բ., Բարաղամանց Արշակ 2 բ., Խրիմեանց Զօրզոպ 2 բ., կոստանեանց Լեոն 1 բ., Ղասապեանց Համազասպ 1 բ., Ղասապեանց Յարութիւն 1 բ., Թուխկեանց Դաւէն 1 բ., Գարիպեանց Մնացական 1 բ., Ղազարեանց կոստանդին 1 բ., Սուլթանեանց Յարութիւն 1 բ., Սարգսեանց Լեոն 1 բ., Մեղիկեանց Յարութիւն 1 բ., Վարդապետիկեանց Աբրահամ 1 բ., Տիգրանեանց Լեոն 1 բ., Աֆրեանց Գրիգոր 1 բ., Խոյեցեանց Համազասպ 1 բ., Սարգսեանց Յովակիմ 1 բ., Ղազարեանց Գէորգ 1 բ., Բարաղամանց Գրիգոր 1 բ., Խոյեցեանց Արամ 1 բ., Խրիմեանց Աւետիք 1 բ., Չինչիրանեանց Բարգարա 1 բ., Բաղամարեանց Հայկ 1 բ., Խաչատրեանց Աւագ 1 բ., Խաչակեանց Արամ 1 բ., Ազամալեանց Երուանդ 1 բ., Աբուլեանց Պետրոս 1 բ., Բաղդասարեանց Կարապետ 1 բ., Ռափայելեանց Լիպարիտ 1 բ., Խրխուեանց Սոփեան 1 բ., Ղանիարտեանց Մկրտիչ 75 կ., Բուլեանց Գասպար 75 կ., Կուպարեանց Յարութիւն 60 կ., Պարսամանց Լեոն 60 կ., Զաքարեանց Յակոբ 50 կ., Տէր-Յարութիւնեանց Համազասպ, Յակոբ և Սեդրակ 1 բ. 50 կ., Այտինեանց Յակոբ 50 կ., Գրիգոր Մկրտչեանց 50 կ., Սարգիսեանց Հայկ 50 կ., Սարգիսեանց Մուշեղ 50 կ., Յովհաննէսեանց Մկրտիչ 40 կ., Զաքարեանց Յարութիւն 40 կ., Բարաղամանց Ղազարոս 40 կ., Ղազանեանց Արամ 40 կ., Սոփոնեանց Յակոբ 40 կ., Սողոմոնց Համազասպ 40 կ., Խաչակեանց Մարտիրոս 40 կ., Պարսեանց Յակոբ 30 կ., Մուրատեանց Մկրտիչ 30 կ., Ղանիարտեան Բաղրատ 25 կ., Գիւնոսեանց Բալաբէկ 25 կ., Գիւնոսեանց Խաչատուր 25 կ., Ռուխիթեանց Երուանդ 25 կ., Մինչաեանց Արամ 20 կ., Վարդանեանց Յովհաննէս 15 կ., Գանիլեանց կոստանդին 50 կ., Դանիլեանց Գարիրել 30 կ., Դումարն յիսուն և ութ բուբլի։

Աշակերտ Զօրզոպ Խրիմեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԻՐՈՒԹ

10 ապրիլի

Նուիրում ծուլութիւնը, անշարժութիւնը մի ընդհանուր կանոն է։ Եթէ այս 1880 թուականում ոչ մի Նամակ չուղարկեցի «Մշակին» պատճառը այն է, որ և ես ենթարկվեցի այդ կանոնին։ Ցաւութիւնը և անշարժութիւնը այսպէս, ինչպէս պտացի, կանոն է և ընդհանուր։ Բնութիւնն անգամ չէ չեղծում այդ կանոնից, տեսէք ձեռը իր մէջերն այժմ չը տեսնված ցրտով, հասարեա 1½ արշին ձիւնով վեր է ընկել գլխներիս և էլ չի ուզում ոտդ դնել, որովհետև ծուլանում է։ Մեր նոր ընթերցարանի լրագիրները այս է երրորդ ամիսն է գնում, որ ուղարկվում են մեզ, ուղարկվում, գալիս են հոս գալիս թիֆլիսից և էլի չեն տացվում, որովհետև չչուզեր, այժմ զուրս է մոդայից... ծանր, ծանր, որքան կարելի է ուշ.... պիտի ծուլանալ. այս է այժմ կանոնը։ Այժմ ամենայն բան կարող է չը շարժվել, ոչ մի բանի խաղաղութիւն անգամ չէ կարելի մրդանվել խիղճը, զգացմը, մարդասիրութիւնը, դատաստանը, արդարութիւնը, անաչառութիւնը (աւելի պաշտօնական տարների մէջ)—բոլորը, բոլորը հանգիստ, անվրդով կարող են ննջել իրար Մորֆէոսի ծոցում։

Նուիրելին իր վանեցի, եղբորը, սովից ժամատասանման անիմաստ սովից մահանող եղբորը կարող է մի կաղ հաց չը մեկնել չուտով, քանի չուտը բերանումն է, ինչ անենք, ուշացնելը պապի դէպքում աներեսի և վանգաւոր կարող է մնել։ Ինչ անենք թէ ուշացնելը իր այն մեկ յուսատու քանի, բայց այժմ նրա չար բաղդից հենց՝ վանեցի եղբոր այն ամուր դպրոցածքը կարող է փչել։ Այդ անպարկեշտ համար փոքր ինչ եռանդ, չարժողութիւն է հարկաւոր, դիտեմ, իսկ դրանք կը վիրաւորէին Նուիրում թագաւորող անշարժութեանը ու ծուլութեանը։

«Չը կայ կանոն, ասած է, առանց բացառութեան»։ Նուիրում երեք մարդիկ հերոսաբար դէմ դրին մեր այդ ընդհանուր կանոնին և բաւական եռանդ ու չարժողութիւն ցոյց տուին, սրանք մեր ապագայ մահատեսացուներն են, որ մի երեք չարքի առաջ արհամարհելով ցուրտն ու բուքը մահապարտ ընկան դէպի Ցուդայի ալիարշը։ Մէկը չը կայ դրանց հարցնող. «տանջամարդներ, ախար ոնց չը ծուլացաք, որ այս մահարեր թանգութիւնում ու ցրտերում տեղից չարժվեցիք.....

Ապագայ մահատես խեղճ, աղքատ դրացի, դու մի կողք գարա հացին կարօտ լաց եղիր քո զաւակների հետ, իսկ քո դրացին արտասուքներդ, մեղդ չը կամենալով տեսնել, մահ տեսնելու, «մահ տեսիս դառնալու համար Երուսաղէմ է վազում..... «Լաց դերեզմանիս հապա գուր կը զայ այս...

Բայց ես խնդրվեցի՝ ասելով, որ անշարժութիւնը ընդհանուր է, բոլորին մոռացել էր թանգութիւնը, աւագակութիւնը և կարմրուկ հիւանդութիւնը. այո, որանք, այս երեքը, մեծ չարժողութեան և յառաջադիմութեան մէջ են մեր գաւառում. սոքա գնալով գնալով աճում ու աճում են։

Աճող կարմրուկը կարծեցնում է այժմ չատ մանուկների աճող՝ ծաղիկ հասաբ և խեղդ մեզ։ Ինչ ոնց ոնցեր զրկում նրանց միակ հարստութիւնից՝ զաւակներից։

Այդ աղքատները լաց են լինում, գուցէ և մը-խիթարվում, որովհետև նրանց մինչև այժմ չը տեսնված թանգութիւնից էլ պատելու հնար չունեն։

Էլի փառք Աստուծոյ՝ որ կառավարութեան կարգադրութեամբ սրանց վիճակը փոքր ինչ թեթևանում է. մեր քաղաքի հայ և թուրք աղքատներին նա 10,000 պուդ ցորեն է ընծայել։ Արդէն մէկ ամիս կը լինի, որ այս մասին այստեղից մի հայ և երեք թուրք գնացին Թիֆլիս ցորեն բերելու, եթէ այս խնամքն էլ պակասել էր այդ թշուառ ընտանիքների գլխից, պէտք է որ ընկնէին նրանք դառն պակասութեան անգութ հարուածների տակ։ Աւաղուց էլ կառավարութեան կողմից 1950 պուդ ասալ տարի ժամանակով փոխ տրված ալիւրը լամանվեցաւ հայ և թուրք աղքատների մէջ. 220 պուդը այդ ալիւրից հասաւ հայ աղքատներին (որոնք ուխտուն անից աւելի են)։ Դրսից բերված ցորենների պատճառով մի առ ժամանակ ցորենը այստեղ էժանացաւ, բայց վերջնապուրց յետ չուտ էլի թանգացաւ։ Ցորենի պուդը այժմ 3 բ. 50 կոպէկով էլ դժուար է ձեռք բերվում և այս թանգութեան անհլուն մասամբ օգնում է հաղորդակցութեան դժուարութիւնը՝ ցրտի և չրջակայ բարձր ձիւնի պատճառով։ Շաբաթական գետնը ծածկող ձիւնից անասունների կերակուրներն էլ դժուար է գտնել. խոտի պուդը 80 կոպ. է. չը տեսնված գին։ Անասունները նոյնպէս իմացան որ այս տարի մի անպտուղ տարի է, խեղճերը. աւելի մտաց գառները՝ ցրտի և սննդի պակասութիւնից փչանում են։ Փոքր ինչ էլ աւագակութեան մասին։ Ձիեր գողանալ, տուն խնամիներ կոտրել անպակաս են. դեռ երկու շաբաթ չը կայ որ աւագակները ծակելով խանութի կողքը՝ պ. Ց. Ն-թանց՝ մինչև երկու հազար արժողութիւն մանուլի և մախմուրի թոփերը տարան։ Գիւղերով կատարվող գողանի աւագակութիւնների հետ չարունակվում են և ցերեկվայ յայտնի աւագակութիւնները։ Երկու իրանեցիներ (հաշվարի) 2 ամիս աւելի մեր գիւղերում մանգալով, սուտ արծաթէ մանկիներ թուղթ փողի հետ փոխելով, մի քանի հազարների տէր դառնալով, անյայտանում են։ Մի ջուանիչեցի հայ է խնամում դրանց խարդախութիւնը (հալչով արծաթէ փողերը) և փրկում կատարելիք դիպուածներին։ Բայց ասում են, որ էլի մէկ 25,000 բուբլի փոխած են։ Ասում են նոյնպէս, որ մեր յաջորդը մէկը 5 բուբլով Երբև հնութիւն առած լինի այդ արծաթի բուբլիներից մէկը։

Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 1 ապրիլի

Կարդալով ազգային պարբերական թերթերում և «Մշակ» լրագրի № 43 պարտ կամարակալի հեռագիրը, որ ասվը Աղդակում սատականում է, ուստի սուրբ պարզ համարելով, կրկին հաւատացել 18 բուբլ. խնդրեմ տանալով տարբերգրների անունները սպէք ձեր լրագրում. Եւսայի Աւագեանց 1 բ., Մինաս Պատրիանց 1 բ., Մկրտիչ տէրացու Սանեփանեանց 50 կ., Գրիգոր Շահնազարեանց 50 կ., Յոսեփան Յակոբեանց 1 բ., Ալեքսանդր Տէր-Մկրտչեանց 1 բ., Ամիրազանց 1 բ., Ալեքսանդր Մելիք Աւագեանց 20 կ., Մի ոմն 1 բ., Աւետ-սանդր Տէր Գէոնդեանց 1 բ., Գուկաս Գուկասեանց սպասաւորի 1 բ., Նիկոլոս Նիկոլոզանց 1 բ., Ազատ Մելիք Աւագեանց 1 բ., Յարութիւն Տէր-Սիմոնեանց 1 բ., Աղասիրդի Օրդանեանով 1 բ., Սակ Սակով 1 բ., Գրիգոր Յարութիւնով 1 բ., Մելքոն Տէր-Բարսեղեանց 1 բ., Կարապետ Սակով 1 բ., Սմբատ Շերմազանով 15 կ., Աւագ և Մելքայէլ Սարգիսեանց 20 կ., Յոսեփան Զօրեանց 45 կ.։ Ընդամենը 18 բուբլ.

Յոսեփան Զօրեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Կրաղիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւններ։

Ֆրանսիական ազգային ժողովի նիստերը նորից սկսվեցան։ Նոքա, ինչպէս երեում է, չափազանց կենդանի, մինչև անգամ ազվիպի կը լինեն։ Կղերականները չափազանց թշնամացած են կառավարութեան հետ և երևի եկող ամառվայ ընթացքում, թէ պատգամաւորների ժողովի և թէ սենատի նրանց կուսակից անդամները կառավարութեանը անդադար հարցեր կառաջարկեն «մարտի հրամանների» առիթով։ «Մարտի հրամաններ» Ֆրանսիայում անուանվում են կառավարութեան այն կարգադրութիւնները, որոնք վերաբերվում են եղբայրներին և հոգևոր միաբանութիւններին։ Ամեն բանից երևում է, որ արգելված միաբանութիւններից չատերը կը հրաժարվեն ներկայացնել կառավարութեանը իրանց կանոնադրութիւնները, և եղբայրների հետ կամարտիպէս էլն փակի իրանց ուսումնարանները, իսկ երբ կառավարութիւնը ուժով կը փակի այդ ուսումնարանները, նոքա կառավարութեան դէմ դատ կը սկսեն։ Զատ նոքան մանաւոր անգիր, որոնք այդ ժամանակ կը պատահեն, առիթ կը տան պատգամաւորների ժողովի և սենատի կղերական անդամներին կառավարութեանը հարցեր առաջարկելու համար։

Այնուամենայնիւ պէտք է նկատել, որ այդ հարցերը կղերականների համար լաւ հետևանքներ չեն կարող ունենալ։ Պատգամաւորների ժողովի մէջ կղերականները և նրանց բարեկամները անընդհատ փոքրամասնութիւն են կազմում։ Սենատի մէջ ֆեբրիի օրէնքի 7-դ յօդուածի քննութեան ժամանակ կղերական արիստոկրատական մեծամասնութիւն կազմվեցաւ, բայց այդ մեծամասնութիւնը այլ ևս չը կայ։ Զատ նոր հանրապետականները, որոնք միասնել էին կղերականների հետ հակասել են իրանց սխալը և այլ ևս չեն կամենում ընդդիմադրել կառավարութեանը։ Այդ խումբի առաջնորդ Դիւֆորը, զգալով ունեցած օրէնքները գործադրելու պատճառով միխատարութեան վրա յարձակվելը սենատի պատգամաւորական դերի համար անպարմար է գտնում։

Վերջին ժամանակներում ակներև եղաւ, որ եթէ կղերականները կառավարութեանը հարց կառաջարկեն «մարտի հրամանների» առիթով, նոքա փոքրամասնութեան մէջ կը հանեն։ Դրանց առաջնորդները, այդ հանգամանքը ի նկատի ունենալով, աւելի լաւ են համարել առ ժամանակ լռել և անգործ սպասել, մինչև որ կառավարութիւնը որ և է կարգադրութեամբ կը ստիպէ չափաւոր հանրապետականներին նորից միանալ կղերականների հետ։ Կառավարութիւնն էլ, խնայելով այդ հանգամանքը, կաշխատի, որ կը-ղերականների յոյսերը չարդարանան։

Ֆրանսիական պարլամենտական կեանքի մէջ անկասած չատ տրամներ և փոխարինիներ կը լինեն, բայց կղերական այդ կուսից դրական հետևանքների չէ կարելի սպասել։ Այն ժամանակից, ինչ Ժիւլ Ֆերրի եղբայրների և հոգևոր միաբանութիւնների ուսումնարանների փակելու հարցը բարձրացրել է, բաւական միջոց է անցել և այդ հարցով հետաքրքրված հասարակութիւնը, այսինքն այն ծնողները, որոնց երեխաները սովորում են հոգևորականների ուսումնարաններում, հաշվել են այդ մոքի հետ և համոզվել են, որ իրանց երեխաների ուսումը շարունակելու համար պէտք է ուրիշ հիմնարկութիւններ գտնել։ Այսպիսի պայմանների ժամանակ եթէ կառավարութիւնը, մինչև անգամ ուժով կը փակէ հոգևորականների ուսումնարանները, անբաւականութիւններին առիթ չի լինի։

ՍԵՐԲԻԱ

—

Կրաղիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Բէլգրադից։

Հեռագիրը երեի հաղորդեց ձեզ, որ օրերս համաձայնութիւն կայացաւ Չիլինցի և Բէլգրադի կառավարութիւնների մէջ սերբիական երկաթուղիների վերաբերութեամբ։ Այդ անվիճելի գործը մանվեցաւ օրերս յայտնի սերբերի։ Աւստրիական և սերբիական կառավարութիւնների հայցացքները այդ գործի վրա բաւական զանազան էին և հարցը լուծելու համար Աւստրիան զիջումներ արաւ։ Աւստրիացիները պնդում էին, որ երկաթուղու գիծը Հասցնվի մինչև բոլգարական երկաթուղու գիծը, իսկ սերբները չէին կամենում ընդունել այդ առաջարկութիւնը, որովհետև հասասա գիտէին, որ Բոլգարիան ոչ թէ միայն իսկոյն չէր կարող սկսել գծի շինութիւնը, այլ մինչև անգամ նշանակված ժամանակամիջոցի մէջ էլ չէր կարող հասցնել։ Այդ պայմանները ի նկատի ունենալով, սերբերը չէին համաձայնում այնպիսի ծանր պայմաններ անել, որոնք օգուտ կը տային ոչ թէ սերբիական, այլ աւստրիական արդիւնաբերութեանը։ Աւստրիացիները անեն տեսակ միջոցներ գործ դրին իրանց նպատակին հասնելու համար, բայց սերբիական հաւատարմատարը չը համաձայնեց կատարել նրանց պահանջը։ Վերջ ի վերջոյ աւստրիական կառավարութիւնը սահմանեցաւ զիջումներ անել, որանցով երկու կողմերն էլ բաւական մնացին։

Մի ժամանակ Սերբիան Աւստրո-Հունգարիայից այդ հարցի վերաբերութեամբ սաստիկ ընդդիմադրութեան էր սպասում։ Մի ժամանակ աւստրիական կառավարութիւնը սպասնում էր Սերբիային, որ իր զօրքերով կը գրաւի երկիրը, եթէ Սերբիան չի կատարի նրա պահանջները։ Մի ժամանակ սերբիական առաջին մինիստր Պասիչ, որ չէր կամենում այնչ զիջումներ անել, մտադիր էր հրաժարական տալ և թողնել, որ իր փոխանորդը մերժէր կամ ընդունէր աւստրիացիների պահանջները։ Մի և նոյն ժամանակ Պասիչ յայտնում էր, որ ոչ մի մինիստր չէր համաձայնի կատարել Աւստրո-Հունգարիայի պահանջները, որոնք ուղղակի վնաս են հասցնում Սերբիայի շահերին։

Այս հանգամանքները ի նկատի ունենալով, Աւստրո-Հունգարիան լաւ համարեց զիջումներ անել և համաձայնութիւն կայացաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, մինիստր Տօլստոյ իր խնդիրքի համեմատ արձակված է պաշտօնից։ Սենատոր Պոբեդոնոսցևին հրամայած է Սինոդի օրեր-պրոկուրորի պաշտօնը վարել։ Դերպտի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Սարուբով սատանա-սեկրետարի աստիճան է ստացել և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ է նշանակվել։

Կ. ՊՕԼԻՍ, 25 ապրիլի (7 մայիսի)։ Զիմնազիական գատարար Կուսիերաուլի սպանդին մահուան պատիժ գատապարտեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 ապրիլի։ Վէյմար և Մինինգենի պետական յանգաւորների զորքի քննութիւնը նշանակված է մայիսի 6-ին։

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ